ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2014 թվականի N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N83_Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասով, «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.3, 1.21 և 1.24 կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի «Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N591-Ն որոշման պահանջների, **որոշում եմ՝**

1. Հաստատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի:
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի անհատական կազմը՝ համաձայն N2 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի, Դաստակերտի քաղաքային համայնքների և մարզի տարածքում գտնվող զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին.
   1) Զորահավաքային առաջադրանքների կատարման համար ստեղծել զորահավաքային մարմիններ և դրանց անհատական կազմերը մեկամսյա ժամկետում ներկայացնել մարզի զորահավաքային մարմին:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թվականի ապրիլի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում զորահավաքային մարմին ստեղծելու, դրա անհատական կազմը եվ կանոնադրությունը հաստատելու մասին>> 83_Ա որոշումը:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. փետրվարի 18
ք. Կապան